Պարույր Սևակ

Վախենում - սարսափում եմ

Վախենում եմ շա՛տ բաներից,
Ամեն տեսակ վա՛տ բաներից:
Ինչպես մանուկն է փախենում
Գիշերային ավեր վանքից՝
Վախենում եմ ես էլ արդի
Կեղծ ֆանատիկ-մոլեռանդի
կուրա՛չ ջանքից:
Ինչպես մանուկն է վախենում
Գերեզմանոց տանող ճամփից՝
Վախենում եմ ես իմ անվան,
Պատվի՞ համար՝
որքան անբիծ,
Նույնքան նաև չպաշտպանված
Ջրպարտության թուխպ ու ամպից...
Վախենում եմ
Սին մտքերի ճարճատումից,
Հին մտքերի աղճատումից,
Նոր մտքերի կրճատումից:
Վախենում եմ
Մերժված կնոջ ահեղ քենից,
Խարխուլ պատի խաղաղ շուքում

Հոգնած մանկան անմեղ քնից:
Վախենում եմ ես թույլերի՞ց.
Այդ նրանք են ամենից շատ
Ստորություն անում կյանքում...
Վախենում եմ ես ծույլերի՞ց.
Այդ նրանք են ամենից շատ
Հոգնածորեն ծանրը տնքում...
Եվ աստղային ա՛յն բույլերից,
Որ խաբում են ճամփորդներին՝
Շփոթեցնում հյուսիս-հարավ...
Եվ տակը ծակ ա՛յն դույլերից,
Որ խաբում են ճամփորդներին՝
Ջրհորի մոտ թողնում ծարավ...
Վախենում եմ ես շա՞տ բանից,
Սարսափում եմ շատ... քի՞չ բանից:
«Խոսքն է եղել սկըզբանից...»,
Իսկ թե հանկարծ մի անբանից
Հըրաման գա՝
Մինչև անգամ
Վերցնել մարդկանց լեզվի՞ց զրկել -
Ո՛չ թե մարդկանց քիմքին կպած
Այն մի կտոր միսը պոկել,
Այլ բերա՞նը ամուր փակել...
Դժբախտ մարդ է անշուշտ կաղը:
Բայց ինչ արժե և կաղության
Անբնական ծանրը խաղը՝
Երբ կաղություն պիտի խաղաս,
Սուտ-սուտ լնգաս, բռնի կաղաս...
Դեռ կա ուրի՛շ զարհուրանք էլ -
Երբ մինչև իսկ երազա՞նքը

Սենյակի պես կտան վարձով,
Հոգեփրկիչ թղթի նման
Կվաճառեն կյանքում նորից...
-Սարսափում եմ վերադարձող
Քաղաքակիրթ միջնադարից...

08, 09.VI.1957թ.
Մոսկվա